

**ԱՍՏՐՅԱՆ ՀԱՄԱԿ
(ԵՊՀ)
ՔՐԸՇԵՀԻՐԻ ԲԱՐՔԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Քըրշեհիրի բարբառը մտնում է թուրքերենի արևմտյան խմբի 8-րդ ենթախմբի բարբառների մեջ:

Քըրշեհիրը հիմնադրել են խեթերը հնագույն ժամանակներում: Խեթերից հետո (մ.թ.ա. 1650-1200) փոյուզիացիները (մ.թ.ա. 1200-675), պարսիկները (մ.թ.ա. 546-332), հույները (Կապադովկիայի քաղաքության շրջանը՝ մ.թ.ա. 332-մ.թ. 18), հռոմեացիները (մ.թ.18-395), բյուզանդացիները (395-1070) հերթով տիրապետել են այստեղ¹: 1071թ-ի Մանազկերտի ճակատամարտից հետո Քըրշեհիրի պատմության մեջ սկսվեց թուրք-խալաֆական տիրապետության շրջանը: Հայտնի է, որ խեթերը Քըրշեհիրն անվանել են *Akuva Saravena*, այսինքն *Suşehri* (ջրի քաղաք), հույները և հռոմեացիները՝ *Chamanen*, *Mokissos*, *Parnossos*, բյուզանդացիները՝ *Jüstinianopolis*, սելջուկները մի շրջան՝ *Gülşehir*: Քըրշեհիրի /Քըրշեհիր և Գյուլշեհիր անունները թուրքերի կողմից են տրվել²:

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Քըրշեհիրի և նրա շրջակայքի բարբառներում գրական թուրքերենում եղած 8 հիմնական ձայնավորի կողքին գոյություն ունեն հետևյալ ձայնավոր հնչյունները . á, â, â, â, ê í, ó, ô, ú:

*Parāya ġaydım, bārārah*³ (*bağırarak*), *ġuváy inen* (*güvey ile*), *sıryâ* (*sarıyor*), *yemāni* (*yemeğini*), *devlet*, *yiğit*, *bitçe* (*bütçe*), *gösünde* (*göğsünde*), *diyöller* (*diyorlar*), *hemördā hem burdā, dūnūr* (*dünür*):

Բարբառային շրջանում երկար ձայնավորները կազմավորվել են մի խումբ հնչյունական իրադարձությունների արդյունքում.

1. *Վանկի ձուլման հետևանքով*. ա)-k- (> - g -), - g -, - ġ - բաղաձայնների ձուլմամբ. *d'ā'lim* < *değilim*, *bayrānī* < *bayrağın*, *bō'n* < *bu + ġün*, *āldi* < *eğildi*, *ōtā* < *ōteki*...

բ)- y - բաղաձայնի ձուլմամբ.

şetsin < şey etsin, isen < iyi isen, şelere < şeylere...

զ)- n - / -n -, - h - բաղաձայնների ձուլմամբ.

õ'n'de < õn'ünde, da < daha, âmed < Ahmet...

Շրջանում շատ տարածված է մեկից ավելի վանկի մի վանկի տեսքով երկար ձայնավորի փոխվելը (վանկի սահելը). şuncâz < şuncağız, din < dersin, u~âd < o vakit, gidecâ'm < gideceğim, ne~bîm < ne bileyim...

2. Բաղաձայնի ընկնելով. բառամիջում ձայնավորից հետո եկող և վանկը փակող -g-, -ğ-, -h-, -k- / -k-, -l-, -n-, -r-, -v-, -y- բաղաձայնները կամ ընկնելով կամ էլ ձուլվելով, իրենցից առաջ գտնվող ձայնավորներին երկարացնում են.

ա)-g-, -ğ- բաղաձայնների ընկնելով.

ik~ûn' < iki gün, dõdum < doğdum, õlum < oğlum, yāmır < yağmur, bâ < bağ, sâ < sağ...

բ)-k- / -k- բաղաձայնների ընկնելով.

âşam < akşam, â'simiz < ekşiğimiz, õsüz < öksüz...

գ)-y- բաղաձայնի ընկնելով.

ğûvâ' < güvey, kõ'lu < köylü, şõle < şöyle, deze < teyze, âşe Ayşe...

դ)-h-, -h բաղաձայնի ընկնելով.

bâşış < bahşış, sil'â < silâh,...

ե)-n- բաղաձայնի ընկնելով, որը հազվադեպ է հանդիպում.

sõra < sonra.

զ)-r- բաղաձայնի ընկնելով.

getidim < getirdim, yimi < yirmi...

է)-v- բաղաձայնի ընկնելով.

tõbe < tõvbe, sõ'müş < sõvmüş, kõ'te < kõvte < kõfte...

ը)Մեկ երկու օրինակում նկատվում է նաև բառավերջում -r- ի ընկնելով առաջացած ձայնավորի երկարելը.

deymē mi < deymezi mi, ğī < kız...

թ)Արաբերենից գրական լեզվի միջոցով շրջանի բարբառները անցած և վանկերից մեկը կոկորդային չ բաղաձայնով վերջացող բառերում, ձայնավորը երկարում է չ բաղաձայնի ընկնելով.

bāzı < bazı, yāni < ya'ni ...

3. Զույգ ձայնավորների ձուլմամբ. n~ õldu < ne oldu, ğar~ õlum < kara oğlum.

4. Քառին ուժ տալու կամ էլ հասկացությունների իմաստները ավելի ազդեցիկ դարձնելու համար որոշ բառերի վերջին վանկեր շեշտով երկար են արտասանվում.

misTavā < Mustafa, òlān < oğlan < oğulan, çıldıraci'n < çaldıracaksın.

Քըրշեհիրի և նրա շրջակայքի բարբառներում բայերի հարցական խոնարհումներում հարցական մասնիկը համարյա չի օգտագործվում, նրա իմաստը և պաշտոնը շեշտով երկար արտասանությամբ է ապահովվում⁴.

a'lı < alır mısın? geli < gelir misin?

bili'yōn? < biliyor musun?

Ռեզային ձայնավորներ

1. Շրջանի բարբառներում "bozlak"⁵ անվամբ մեղեդիների ուղեկցությամբ արտասանվող բանաստեղծություններում շատ հաճախ են հանդիպում ռեզայնացված ձայնավորների.

bacı, âteşe, zalım ezirā~il seni burda mı buldū oy...

2. Ինչպես հայտնի է, թուրքերենում լեզվի հետին կողմի փափուկ քիմքին հպվելով ռունգից արտաբերվող մի ող հնչյուն, կա որին միջին և հետին քմային ու անուն ենք տալիս: Անատոլիական բոլոր բարբառներում տարածված կերպով նկատվող ռեզայնացումը այս շրջանում նույնպես տարածված է.

e~ër "eğer" < ener, ba~ā bana, so~ā < sonra...

Մի օրինակում նույնպես նկատվում է՝ որպես ձայնարկության վերջին վանկի ձայնավոր. ahā "işte":

Երկբարբառներ

Երկբարբառները կազմավորվում են երկու առանձին ձայնավորի մեկը մյուսի հետ միավորվելու, առանձին կամ ածանցների հետ բառերի միջին վանկերում և ձայնավորների միջև գտնվող ğ, h, v, y բաղաձայնների ձուլվելու արդյունքում: Քանի որ թուրքերենում զույգ ձայնավորի երևույթին սովորաբար բարբառներում ենք հանդիպում, գրական լեզվում նկատվող երկբարբառները օտար հատկապես արաբական ծագման բառեր են. saat, şâir, şiiir, dua...

Վերջին տարիներին արևմտյան լեզուներից անցած բառերում նույնպես նկատվում են.

Fuar, şampuan, kooperatif...

Եթե զույգ ձայնավորների երկրորդ անդամները առաջինների համեմատ ավելի նեղ և պայթական են սրանց «իջնող (ցածրացող) երկբարբառներ են անվանում, իսկ հակառակ դեպքում՝ բարձրացող երկբարբառներ: Եթե երկու անդամի ճնշումն ու ուժերը նույնն են, սրանց էլ «հավասար երկբարբառներ» անունն է տրվել:

1. *Բարձրացող երկբարբառներ* = կես ձայնավոր + ձայնավոր.⁶ *îā*, *uā*, *ôā*, *ēa*, *īē*.

sandîā (*sandığa*), *pû~ār* (*pınar*), *bô~āzında* (*boğazında*), *cî~erim* (*cigirim*), *şe~äre* (*şehir*)...

2. *Հավասար զույգ ձայնավորներ* = ձայնավոր + ձայնավոր. *a~a*, *e~e*, *ı~ı*, *i~i*, *u~u*, *ü~ü*:

Քըրշեհիրի և նրա շրջակայքի բարբառներում ամենաշատ հանդիպող երկբարբառների տեսակը սրանք են.

şı~i (*şeyi*), *da~atmış* (*dağıtmış*), *ğırşe~er* (*kırşehir*), *sı~ır* (*sığır*), *dûûn* (*düğün*)...

3. *Իջնող երկբարբառներ* = ձայնավոր + կես ձայնավոր. *â~ı*, *â~u*, *ôu*, *ei*.

Օրինակները քիչ են. *çöunu* (*çoğunu*), *döu* (*doğu*), *ğırşeir* (*Kırşehir*), *toprâı* (*toprağı*)...⁷

ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐ

Քըրշեհիրի բարբառներում թուրքերեն գրական լեզվի 21 բաղաձայնի կողքին օգտագործվում են նաև *ğ*, *ğ*, *k*, *n*, *h*, *k* հնչյունները: Շրջանի բարբառներում բաղաձայնների վտփոխություններ նկատվում են և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում:

Բառասկզբում կատարվող փոփոխություններ.

k-> *g*- *künde* (*günde*), *köpegler* (*köpekler*), *kölge* (*gölge*).

g-> *ğ*-, *k*-> *k*- *ğö'* (*gök*, *yeşil*), *ğóbā'ne* (*göbeğine*), *kómür* (*körmür*), *kóylu* (*köylü*)...

k-> *ğ*- *ğaba* (*kaba*), *ğadın* (*kadın*), *ğapı* (*kapı*)...

t-> *d*-, *d*-> *t*- *dadlı* (*tatlı*), *duzā* (*tuzağı*), *tohdur* (*doktor*)...

b-> *p*- *pahla* (*bakla*), *palta* (*balta*), *'panğa* (*banka*), *pıçā* (*bıçağı*)...

Բառասկզբում բաղաձայնի առաջանալը. ինչպես որ թուրքական մյուս բարբառներում է, այս շրջանի բարբառներում նույնպես դեպքերը քիչ չեն: Ավելի հաճախ *h*-, *y*- և *v*- հնչյունների առաջանալն է նկատվում.

habayna (aba ile), hasansör (asansör), havlu (avlu), hayva (ayva)...
yit- (it)-, yesir (esir), yirah (ırak), vemanet (emanet)⁸ ...

Բառամիջում կատարվող փոփոխություններ. բառամիջում կողք-կողքի գտնվող երկու բաղաձայններից մեկը արտաբերման իրեն մոտ որակ կրող մյուսի կողմից ամբողջությամբ կամ մասամբ ասիմիլացվում է⁹:

1. *Պրոգրեսիվ առնմանությամբ.*

-ml->-mn- kıy isimneri, durumnarı...
-yl->-yn- babasıynan, arabayna, deveyne, türküyne, hocayna...
-rl->-rn- altınnarna, ókúzlernen, onnarna...
-nl->-nn- yannış, bunnar, çimennik, ğannı...
-mv->-inm- üzüm_merin (üzüm verin), on sekiz dâne šiirim_mar orda...
-sh->-şş- meşşur (meşhur)
-fh->-ff- son saffada
-çy->-çç- üç_çüz (üç yüz).

2. *Հետադարձ առնմանությամբ.*

-rl->-ll- talla (tarla), billikte (birlikte), hayıllı (hayırlı)...
-nb->-mb- istambul, sümbül, om_başılarm...
-ls->-ss- gússüm (Gülsüm), gessin, ğut'ı~ossun...
-zc->-cc- accıh (azıcık).
-şş->-ss- gelmissim, işlemişmissin...
-çs->-şs- irfan kıılışsin, aşsin...
-zs->-ss- ses gelmesse, ğöremessin, utanmassam...
-hm->-mm- memmed.
-md->-nd- şindi, şindicik.
-ğn->-nn- inne.

Բառավերջում կատարվող փոփոխությունները.

Քրոշեհիթի բարբառներում մնաց փոփոխությունները շրջանի որոշ բարբառների համեմատ քիչ են.

-k>-h ğırh, paşhh (başlık), sandıh, çoh, ah (ak)...

Նույն փոփոխությունը նկատվում է մաև ապառնի ժամանակի -cıh / -cih ածանցում.

bulacıh (bulacağız), yarvalacıh (yalvaracağız), yapacıh (yapacağız)...

-ç > -ş kerpiş, oruş, kılış, üş, aaş (ağaç), heş (hiç)...

-s > -ş միշտ herkes անորոշ դերանվան մեջ է նկատվում. herkeş, herkes¹⁰:

- z > -s sekis.
- s > -z *yonuz* (Yunus), *herkez*, *domatiz* (domates)...
- ç > -c *aac* (ağaç), *saturac* (satranç), *oruc*.
- t > -d *armıd*, *süđ*, *id* (it, köpek)...
- p > -b *varıb*, *dutub*, *çıharıb*...
- k > -g *ceng*, *yemeg*, *isdemeg* (istemek), *ğúlüşmedig*...
- ķ > -ğ *aşğ*, *analığ*, *toplandığ*, *çoğ*...

Բաղաձայնի ընկնելը

Քըրշեհիրի և նրա շրջակայքի բարբառներում տարածված է f, ğ, h, k, l, n, r, v, y, z բաղաձայնների ընկնելու երևույթը.

f-ի ընկնելը. *tevig* (Tevfik), *çit* (çift), *ökelen* (öfkelen)...

ğ-ի ընկնելը. *olan* (oğlan), *döru* (doğru), *büday* (buğday), *yāmır* (yağmur)...

h-ի ընկնելը. *her_alda* (her halde), *ğāvemizi* (kahvemizi), *āmed* (Ahmed), *cepe* (cephe)...

l-ի ընկնելը. *nası(nasıl)*, *ķahacah* (kalkacak), *boşattım* (boşaltım), *atmış beş* (altmış beş)...

r-ի ընկնելը. *bi* (bir), *sahyosa* (salıyor ise), *sona* (sonra), *oturuyoken* (oturuyor iken)...

v-ի ընկնելը շատ քիչ է նկատվում. *töbe* (tövbe), *deşir-* (devşir-), մի օրինակում էլ բառասկզբում է ընկնում. *ücüt* (vücüt):

z-ի ընկնելը. *accıh* (azıcık), *ğī!* (kız!), *getiremesem de* (getiremez isem)...

k/ķ-ի ընկնելը. *yū'sek* (yüksek), *ösüz* (öksüz), *yōsa* (yoksa), *cazı_arısı* (cadı karısı)...

n-ի ընկնելը. *īsānnarı* (insanları), *sōra* (sonra), *piriç* (pirinç), *reçberlig* (rençberlik)...

t-ի ընկնելը մեծ մասամբ բառավերջում է նկատվում. *çiflik* (çiftlik), *ıras gel-* (rast gel-), *doslara* (dostlara), *serbes* (serbest), *üs* (üst)...

y-ի ընկնելը. *dēzeleri* (teyzeleri), *ulaf* (yulaf), *buğda* (buğday), *hābeyi* (heybeyi), *sülemen* (Süleyman), *úce* (yüce), *üç_üz* (üç yüz), *ğoduñ* (koydun)¹¹...

Վանկի սահելը

Ինչպես շրջանի մյուս բարբառներում, Քըրշեհիրի բարբառում նույնպես վանկի սահելը բնորոշ առանձնահատկություն է: Այդ պատճառով օրինակներն առատ են.

ne_bīm (ne bileyim), n_apaz (ne yapacağız), çekmen (çekmeyin), nenecīm (neneciğim), nā'yet (nihayet), şer (şehir), dāsdan (Dağıstan), uad (o vakit), ötö'n (öteki gün), nem_men? (ne bileyim ben?), nō'rdü? (ne gördü?), nō'recā'm? (ne yapacağım? ne göreceğim?)...

Բաղաձայնի տեղափոխվելը

Բաղաձայնի տեղափոխվելը երկու կերպ է տեղի ունենում և ըստ այդմ էլ անվանվում է.

ա/ *մոտ տեղափոխում* բառի մեջ հարևան երկու բաղաձայնի տեղափոխումը: Շրջանում օրինակներն առատ են.

1.pr- ~ -rp-

toprak~ torpah, köprü~ körpü, yaprak~ yarpak, kirpik~ kiprik, kipri(kirpiği).

2.ml- ~ -lm-

memleket ~ melmeket, çömlek ~ çölmek.

3.br- ~ -rb-

kibrit ~ kirbit, ebrişim ~ erbişim, ibrahim ~ irbām.

4. mr- ~ -rm- imren- ~ irmen-

5.lv- ~ -vl- helva ~ havla

6. ks- ~ -sk- tiksın- ~ tiskin-

7.kr- ~ -rk-/-rh- akraba ~ arhaba

8.vr- ~ -rv- avrat ~ arvat:avrad, evran ~ ervan: ahi ervan sultāni.

9. -cr- ~ -rc- tecrube ~ tercübe

10. -rv- ~ -vr- kervan ~ kevran, derviş ~ devriş

11. -kş- ~ -şk- ekşi ~ eşki

12. -mh- ~ -hm- zemheri ~ zahmarı

13. -pl- ~ -lp- çıplak ~ çılpah

բ/ *հեռու տեղափոխում* երկրորդ բաղաձայնը ցատկում է առաջին բաղաձայնի տեղը և նրան իր տեղն է նետում: Այս շրջանի բարբառներում տեղափոխման մման օրինակները քիչ են¹².

1. l-r ~ r-l ileri ~ ireli, bulgur ~ burğul

2. s-r ~ r-s göster- ~ göset- : görşedince

3. -n ~ n-d ödünç~ öndüş

4. l-n ~ n-l lânet ~ nâlet.

**HASMIK ASATRYAN
(YSU)
SOME PHONETIC SPECIFICATIONS OF THE KIRSHEHIR DIALECT**

The article applies to the changes that occur as a result of different phonetic phenomena of vowels and consonants, some specifications of their formation in the Kırshchir dialect.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Tarım H. C., Kırşchir Tarihi Üzerinde Araştırmalar I, Kırşchir Vilâyet Matbaası, 1938, էջ 17-20:
2. Tarım C.H., Tarihte Kırşchir-Gölşchir ve Baballar-Ahiler-Bektaşiler, 3. baskı, İstanbul 1948, էջ 6:
3. Korkmaz Z., Nevşchir ve yöresi Ağızları, I c., Scs Bilgisi, 2. baskı, Ankara 1977, էջ 29:
4. Kırşchir ve Yöresi Ağızları, A. Günşcn, TDK Yayınları, Ankara, 2000, էջ 26:
5. Ժողովրդական երգի տեսակ:
6. Որոշ անատոլիական քարքառներում այս օրինակներից քաղի կան մակ ia (T. Gülsensoy, Kütahya ve Yöresi Ağızları, TDK yay. Ankara 1988, էջ 29), ia, io, ōo, ōo (Z. Korkmaz, Nevşchir ve Yöresi Ağızları, էջ 42), ēā, īā, ic, iu, io, ōo (Z. Korkmaz, Güncy-Batı Anadolu Ağızları-Scs Bilgisi, DTCF Yay., Ankara 1956, էջ 28) և մնաց քարճրացող երկքարքառների օրինակներ:
7. Günşcn A., նշվ. աշխ., էջ 30-31:
8. Günşcn A., նշվ. աշխ., էջ 65-66:
9. Korkmaz Z., Nevşchir ve Yöresi Ağızları..., էջ 92-93:
10. Korkmaz Z., նշվ. աշխ., էջ 105:
11. Günşcn A., նշվ. աշխ., էջ 75-77:
12. Cafcroğlu A., Anadolu Ağızlarında Metathésis Gelişmesi, TDAY 1955, էջ 1-7: